ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2025թ. N ՄՈ/1079-Ա

ք. Արմավիր

«ԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐԳԱՐԻՏ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 11-ի ՆՄՈ/1030-Ա որոշումը և Մարգարիտ Պողոսյանի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Դաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Մարգարիտ Պողոսյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա տեղափոխված ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ին՝ 1 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մարգարիտ Պողոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Դաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Դաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության թվային գրագիտության և համակարգչային գիտության ուսուցչուհի Արևիկ Հարությունյանին:
3. 2025 թվականի դեկտեմբերի 30-ին «Դաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության թվային գրագիտության և համակարգչային գիտության ուսուցչուհի Արևիկ Հարությունյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մարգարիտ Պողոսյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվական հունվարի 5-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**